

**ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**  
**ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ**  
**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**  
**ՈՐՈՇՈՒՄ N 43/6**

ք.Երևան

20 հուլիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ՝ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ ՊԵԿ փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 06.03.2018թ. N2139960 վարչական ակտի դեմ «Դավիթ Երթուղային Տաքսի» ՓԲԸ տնօրեն Արմեն Բեգունյանի դիմում-բողոքը՝

**ՊԱՐԶԵՑ**

«Դավիթ Երթուղային Տաքսի» ՓԲԸ տնօրեն Արմեն Բեգունյանի կողմից դիմում-բողոք է բերվել ՀՀ ՊԵԿ փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 06.03.2018թ. N2139960 վարչական ակտի դեմ, որով կիրառվել է ՀՀ Հարկային օրենսգրքի 420-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը:

ՀՀ Հարկային օրենսգրքի 441-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հարկային մարմնի ընդունած և ուժի մեջ մտած անհատական իրավական ակտը կարող է բողոքարկվել այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀՀ ՊԵԿ փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 06.03.2018թ. N2139960 վարչական ակտը ուժի մեջ է մտել 07.03.2018 թ., սակայն դրա դեմ բողոքը տրվել է 10.07.2018թ.՝ վերոգրյալ իրավանորմով նախատեսված երկամսյա ժամկետի խախտմամբ:

ՀՀ հարկային օրենսգրքի 442-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի համաձայն՝ հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովն ընդունում է հարկ վճարողի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճելու մասին համապատասխան գրավոր որոշում, եթե դիմում-բողոքը ներկայացվել է Օրենսգրքի 441-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետի ավարտից հետո:

Քննարկվող դեպքում «Դավիթ Երթուղային Տաքսի» ՓԲԸ տնօրեն Արմեն Բեգունյանի կողմից բաց է թողնվել ՀՀ ՊԵԿ փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 06.03.2018թ. N2139960 վարչական ակտի՝ վարչական կարգով բողոքարկելու ժամկետը:

Միաժամանակ, իրազեկման կարգով հայտնում ենք հետևյալը՝ ՀՀ հարկային օրենսգրքի 44-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ եթե հարկային մարմնին հայտնի են դարձել հարկ վճարողների կողմից ներկայացված հարկային հաշվարկներում առկա անճշտություններ, որոնք օրենսգրքով սահմանված դեպքերում ու կարգով հնարավոր չէ ճշտել ճշտված հարկային հաշվարկների ներկայացման միջոցով կամ օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ ՀՀ օրենքներով սահմանված դեպքերում անհրաժեշտ է վերահաշվարկել հարկ վճարողի հարկային պարտավորությունները, ապա այդ պարտավորությունները կարող են ճշտվել Կառավարության սահմանած

կարգով՝ առանց հարկ վճարողների մոտ ստուգումների (այդ թվում՝ վերստուգումների) իրականացման,

Հաշվի առնելով վերոնշյալ կարգավորումները՝ հայտնում ենք, որ մինչև «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ 08.02.2018թ. ՀՕ-124-Ն օրենքով կատարված փոփոխությունները գործող կարգավորումներին համապատասխան՝ ավտոբուսով և (կամ) միկրոավտոբուսով ուղևորափոխադրման գործունեության համար հաշվարկված արտոնագրային հարկի գծով հարկային պարտավորությունները ենթակա են վերահաշվարկման, և սահմանված չափից ավել վճարված գումարները կարող են ուղղվել այլ հարկային պարտավորությունների (այդ թվում՝ գալիք հաշվետու ժամանակաշրջանի համար վճարման ենթակա արտոնագրային հարկի պարտավորությունների) մարմանը կամ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով ենթակա են վերադարձման: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում հարկային մարմնի կողմից հարկային պարտավորությունները հնարավոր է ճշտել միայն օրենսգրքի 44-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով, հայտնում ենք, որ հարկային պարտավորությունների մասով վերահաշվարկները կկատարվեն օրենսգրքի 44-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթների կիրարկումն ապահովող՝ Կառավարության որոշմամբ սահմանված կարգն ուժի մեջ մտնելուց հետո:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը

#### ՈՐՈՇՈՒՄ Է՝

«Դավիթ Երթուղային Տաքսի» ՓԲԸ տնօրեն Արմեն Բեգունյանի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճել:

Սույն որոշմանը չհամաձայնելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ